**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 23

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-ին կետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել 2020 թվականի մայիսի 4-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

- Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022թթ ծրագրի շրջանակներում իրականացվող <<Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում>> ծրագրով << Համայնքային տարածքը որպես քաղաքացիների կենտրոնի հիմնանորոգում և կահավորում>> դրամաշնորհային ծրագրին համայնքային ներդրում կատարելու մասին
- Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին
- Համայնքային ենթակայության <<Արևիկ>> մարզադաշտը և մանկապատանեկան մարզադպրոցը 5 տարի ժամկետով, անհատույց <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ին հատկացնելու վերաբերյալ:
- ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
- Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.
- Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին:
- <<Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի փողոցային լուսավորության կառուցում>> ծրագրին մասնակցելու և ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու թույլտվության մասին:
- «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին:
- Վայք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների և մրցույթների կազմակերպման ու իրականացման կարգ սահմանելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 24**

<<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ>> ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ ու Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող <<Ժողովրդական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում>> ծրագրով <<Համայնքային տարածքը որպես քաղաքացիների կենտրոնի հիմնանորոգում և կահավորում>> դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարել համայնքային ներդրում՝ դրամաշնորհի առնվազն 10 տոկոսի չափով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 25

## ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 92-րդ հոդվածի 4-րդ մասով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022թթ ծրագրի շրջանակներում իրականացվող <<Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում>> ծրագրով << Համայնքային տարածքը որպես քաղաքացիների կենտրոնի հիմնանորոգում և կահավորում>> դրամաշնորհային ծրագիրն իրականացնելու նպատակով բացել արտաբյուջետային հաշիվ:
2. Աշխատակազմի ֆինանսական բաժնի պետին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**COUNSIL OF EUROPE OFFICE IN YEREVAN**
**BUREAU DU CONSEIL DE L'EUROPE À YEREVAN**
**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԵՐԵՎԱՆՈՒՄ**

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Mr Suren Papikyan
Minister of Territorial Administration and Infrastructure
Government Building 3, Republic Square
Yerevan 0010, Republic of Armenia

9 March 2020
*CoE/LO(2020)0036*

Dear Minister,

It is my pleasure to inform you that in the framework of the Project "Democratic Development, Decentralisation and Good Governance in Armenia" we are planning to start the implementation of the grant projects by selected consolidated communities. The evaluation of the grant proposals was conducted by the Grant Selection Committee composed of peers and local stakeholders that scored and ranked the applications in the three sub-categories and made recommendations for the award of grants. Projects have been assessed on several criteria including sustainability, innovation, replicability, environmental impact and engagement with women, youth and poor or disadvantaged citizens.

The Project "Democratic Development, Decentralisation and Good Governance in Armenia" is part of the Council of Europe Action Plan for Armenia 2019-2022 and is funded by the Austrian Development Cooperation. The grant component is included in the Project work plan that has been discussed and approved by the Project Steering Committee co-chaired by the Ministry of Territorial Administration and Infrastructure.

The grant application process was open to all 52 consolidated communities. Successful municipalities are to be supported for the renovation of community halls, live webcasting of council sessions, and inter-municipal cooperation initiatives.

After a thorough review of all 45 project applications, the Selection Committee has identified 25 projects from 20 consolidated communities for the award of grants. Please find enclosed the list of selected communities across the three sub-categories.

Using the opportunity provided by Article 92 of the RA Law on Local Self-Government, the Council of Europe prefers transferring grant funds foreseen for the implementation of the selected projects to extra-budgetary accounts to be opened for the partner communities at the treasury from March 2020 to December 2021. In this regard, we would like to ask for your approval.

Ms Ani Dallakyan (ani.dallakyan@coe.int), Senior Project Officer, is responsible for the grant component. Should you require any additional information, please do not hesitate to contact her.

I thank you very much in advance for your kind consideration of this request and I am looking forward to our continued fruitful co-operation.

Yours sincerely,

Natalia Vogtova
Head of Office

ՄՏՊԱ ՏԵՂ 13856-2020
«13» 03 2020

COUNCIL OF EUROPE OFFICE IN YEREVAN
Erebuni Plaza Business Center
5th floor - 26/1 V. Sargsyan Street
Yerevan 0010 - Armenia
Tel ▸ (+374 10) 54 63 22
Fax ▸ (+374 10) 54 63 19
Mail ▸ coe.yerevan@coe.int
Site ▸ www.coe.am
www.coe.int

*Ոչ պաշտոնական թարգմանություն*

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պրն. Սուրեն Պապիկյանին

9-ը մարտի, 2020
*CoE/LO(2020)0036*

Հարգելի պարոն Պապիկյան,

Սիրով տեղեկացնում եմ Ձեզ, որ «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում նախատեսում ենք սկսել դրամաշնորհային ծրագրերի իրականացումը ընտրված համայնքների կողմից: Դրամաշնորհային ծրագրերի գնահատումը իրականացրել է ՏԻՄ ոլորտի փորձագետներից և գործընկերներից բաղկացած Դրամաշնորհների ընտրական հանձնաժողովը, որը գնահատել և դասակարգել է հայտերը ըստ երեք անվանակարգերի և դրամաշնորհների տրամադրման հետ կապված առաջարկություններ ներկայացրել: Ծրագրերը գնահատվել են մի քանի չափանիշներով, այդ թվում՝ ծրագրի կայունության, նորարարության, կրկնելիության, շրջակա միջավայրի վրա ազդեցության, ինչպես նաև կանանց, երիտասարդների և աղքատ կամ անբարենպաստ պայմաններում գտնվող քաղաքացիների ներգրավվածության տեսանկյունից:

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022թթ. ծրագրի շրջանակներում՝ Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ: Դրամաշնորհային բաղադրիչը ընդգրկված է Ծրագրի աշխատանքային պլանում, որը քննարկվել և հաստատվել է Ծրագրի ղեկավար կոմիտեի կողմից, որի համանախագահն է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Դրամաշնորհային ծրագիրը բաց էր բոլոր 52 խոշորացված համայնքների համար: Հաջողված համայնքները օժանդակություն կստանան համայնքային տարածքները վերանորոգելու, ավազանու նիստերի ուղիղ հեռարձակման և միջհամայնքային համագործակցության նախաձեռնությունների համար:

Բոլոր 45 ծրագրերի հայտերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո Ընտրական հանձնաժողովը առանձնացրել է 25 ծրագիր 20 խոշորացված համայնքներից՝ դրամաշնորհ ստանալու համար: Կից ներկայացված է երեք անվանակարգերում ընտրված համայնքների ցանկը:

Օգտվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 92-րդ հոդվածով ընձեռած հնարավորությունից՝ Եվրոպայի խորհուրդը նախընտրում է ընտրված ծրագրերի իրականացման համար նախատեսված դրամաշնորհային միջոցները փոխանցել գանձապետարանի արտաբյուջետային հաշիվների վրա, որոնք կբացվեն գործընկեր համայնքների համար 2020թ.-ի մարտից մինչև 2021թ.-ի դեկտեմբեր ժամկետով: Այս կապակցությամբ կցանկանայինք հայցել Ձեր համաձայնությունը:

Դրամաշնորհային բաղադրիչի պատասխանատուն է Ծրագրի ղեկավար Անի Դալլաքյանը (ani.dallakyan@coe.int): Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել նրա հետ:

Կանխավ շնորհակալություն եմ հայտնում սույն խնդրանքին արձագանքելու համար և ակնկալում շարունակական արդյունավետ համագործակցություն:

Նատալյա Վուտովա
Գրասենյակի ղեկավար

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» Ծրագիր, Եվրոպայի խորհուրդ, Երևան

Դրամաշնորհային ծրագրեր

**Համայնքային տարածքների վերանորոգում կամ բարելավում**

1. Չարենցավան, Կոտայքի մարզ
2. Ալավերդի, Լոռու մարզ
3. Օձուն, Լոռու մարզ
4. Մեղրի, Սյունիքի մարզ
5. Քաջարան, Սյունիքի մարզ
6. Արենի, Վայոց ձորի մարզ
7. Գլաձոր, Վայոց ձորի մարզ
8. Ջերմուկ, Վայոց ձորի մարզ
9. Վայք, Վայոց ձորի մարզ
10. Նոյեմբերյան, Տավուշի մարզ
11. Ապարան, Արագածոտնի մարզ

**Ավագանու նիստերի ուղիղ առցանց հեռարձակում**

1. Կապան, Սյունիքի մարզ
2. Քաջարան, Սյունիքի մարզ
3. Սիսիան, Սյունիքի մարզ
4. Տեղ, Սյունիքի մարզ
5. Նոյեմբերյան, Տավուշի մարզ
6. Ծաղկահովիտ, Արագածոտնի մարզ
7. Տաշիր, Լոռու մարզ
8. Մարմաշեն, Շիրակի մարզ

## Միջհամայնքային համագործակցության նախաձեռնություններ

1. Վարդենիս, Գեղարքունիքի մարզ
2. Զառիթափ, Վայոց ձորի մարզ
3. Տաթև, Սյունիքի մարզ
4. Տաշիր, Լոռու մարզ
5. Ծաղկահովիտ, Արագածոտնի մարզ
6. Մարմաշեն, Շիրակի մարզ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 26**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԱՐԵՎԻԿ>> ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԸ 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ <<ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

<<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետի հիման վրա,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն համայնքային սեփականության <<Արևիկ>> մարզադաշտը և մանկապատանեկան մարզադպրոցը, 5 տարի ժամկետով, <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ին անհատույց հատկացնելու, Վայք համայնքում մանկապատանեկան ֆուտբոլը զարգացնելու և ֆուտբոլային խաղեր կազմակերպելու նպատակով:
2. Հիմնական պայմանագրի կնքմանը անդրադառնալ <<Նորավանք սպորտային ակումբ>> ՍՊԸ-ին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից ակումբային գործունեության լիցենզիա հատկացնելուց հետո

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 27**

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Աշոտի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Զեդեա գյուղում գտնվող 1,77205 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք, կադաստրային ծածկագիր 10-023-0306-0150:

Նպատակային նշանակությունը փոխելու հիմնական նպատակը՝ գործող արևային էլեկտրակայանի ընդլայնում

Վերը նշված ծածկագրով հողամասերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի № 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով Դավիթ Աշոտի Զաքարյանի դիմումը՝ գործող արևային էլեկտրակայանն ընդլայնելու, կատարվելիք ներդրումների չափը, ինչպես նաև սկզբնական մոտ 10-15 աշխատատեղեր, իսկ հետագայում 3 հիմնական ստեղծելու մասին գրությունը, ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Զեդեա գյուղում գտնվող 10-023-0306-0150 կադաստրային ծածկագրով 1,77205 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը, որից 0,72005 այլ և 1,052 հա վարելահող փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ արևային էլեկտրակայան կառուցելու նպատակով:

2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը:
3. Փոփոխվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, իսկ կառուցապատման նպատակով տրամադրվելու դեպքում՝ նաև նախատեսվող օբյեկտի հզորությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկ, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զեղեա գյուղի 5-րդ փողոց 6 հասցեի/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 25032020-10-0021/ 9,43259 հա էներգետիկ հողատարածքի ընդլայնման նպատակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 28

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

| Հ/հ | Օտարման նպատակը | Գտնվելու վայրը | Մակերեսը/հա/ | Մեկնարկային գինը/դրամ/ | Հողամասի ծածկագիրը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հասարակական կառուցապատում | ք. Վայք, Ջերմուկի խճ. 1-ին նրբ. թիվ 6 | 0,055 | 450000 | 10-003-035-015 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատում |
| 2 | Բնակելի կառուցապ | ք. Վայք, Ջերմուկի | 0,04143 | 350000 | 10-003-0010- | Բնակավայրերի | Բնակելի կառուցապա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ատում | խճ. 45/7 | | | 0006 | | տում.. |
| 3 | Բնակելի կառուցապատում | ք. Վայք, Վ. Համբարձումյան փողոց 6/8 | 0,05945 | 490000 | 10-003-0004-0375 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատում |
| 4 | Գյուղ գործունեություն ծավալելու | Վայք համայնք, գ. Արին | 1,06134<br>3,0459 | 78000<br>222000 | 10-009-0111-0009<br>10-009-0111-0079 | Գյուղատնտեսական<br>Գյուղատնտեսական | Արոտավայր<br>Արոտավայր |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 29

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ընդունել ի գիտություն Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հավելված համայնքի ավագանու

04.05.2020թ. թիվ N 29 որոշման

31.03.2020թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Նախատեսված տարեկան | Կատարողական եռամսյակ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 4750.0 | 583,4 | 12,3 |
| Գույքահարկ | 35000.0 | 7600,8 | 21,7 |
| | | | |
| Տեղական տուրքեր | 6622,5 | 1149,7 | 17,4 |
| Ընդհամենը գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ | 7267,0 | 428,1 | 5,9 |
| | | | |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 162805,4 | 43693,1 | 26,8 |
| Այլ եկամուտներ Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 35496,8 | 5958,3 | 16,8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 251941.7 | 59413.4 | |

| Ծախսային մաս | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական /եռամսյակ / | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 73962.6 | 15994.7 | 21,6 |
| Էներգետիկ ծառայություններ | 3660.0 | 1686.1 | 46,1 |
| Կոմունալ ծառայություններ | 140.0 | 0 | 0 |
| Կապի ծառայություններ | 940.0 | 190.0 | 20,2 |
| Գործուղումներ և շրջագայությունների ծախսեր | 300.0 | 21.4 | 7,1 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 4850.0 | 300.2 | 6,2 |
| Դրամաշնորհներ | 169232,6 | 39172,6 | 23,1 |
| Սոց. նպաստներ և կենսաթոշակներ | 200.0 | 0 | 0 |
| **Վարչականի ընդամենը ծախս** | **253285,1** | **57365,0** | **22,6** |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 41000,0 | 8900,9 | 21,7 |
| Վարչ.սարք ,և այլ մեքենաների սարք, | 3517,8 | 0 | 0 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 5500,0 | 0 | 0 |
| Ֆոնդային բյ.ընդամենը | 50017,8 | 8900,9 | 17,8 |

Վայք համայնքի ղեկավար Թ.Ս.Ավետյան

Ֆին.բաժնի պետ Ն.Հ.Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 30**

<<ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու <<Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի փողոցային լուսավորության կառուցում>> սոցիալական զարգացման ծրագիրը:
2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել <<Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի փողոցային լուսվորության կառուցում>> սոցիալական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020թ. բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՎԻԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 31**

<<ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ>> ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն Վայքի համայնքապետարանի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ միջև կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները և հաղթող նախագիծ հայտարարել Վայքի բարեկարգում ՀՈԱԿ-ի կողմից կողմից ներկայացված <<Վայք համայնքում ժամանակակից կանգառների կառուցում >> նախագիծը:
2. Սույն որոշման առաջին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրում՝ 500 /հինգ հարյուր/ եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ տվյալ օրվա սահմանած փոխարժեքով
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*04 ՄԱՅԻՍԻ 2020թ.*

**ՈՐՈՇՈՒՄ N 32-Ն**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Սահմանել Վայք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների և մրցույթների կազմակերպման ու իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1 և հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

*Հավելված 1*
ՀՀ Վայոց ձոր մարզի
Վայք համայնքի ավագանու
2020թ. մայիսի 4-ի թիվ 32-Ն որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների և մրցույթների կազմակերպումն ու իրականացումը, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ու Հողային օրենսգրքերի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի դրույթներից:
2. Աճուրդների և մրցույթների կազմակերպիչը համայնքի ղեկավարն է, որն իր որոշմամբ ստեղծում է համապատասխան հանձնաժողովներ:
3. Հանձնաժողովներն որոշումներ են ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ:
4. Հանձնաժողովները գլխավորում է Վայք համայնքի համայնքապետը:
5. Հանձնաժողովն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը: Աճուրդի անցկացման ձևի մասին նշվում է աճուրդի իրականացման հայտարարության մեջ:
6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները.
   1) աճուրդի կայացման տարին, ամսաթիվը և ժամը.
   2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).
   3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).
   4) աճուրդի ձևը և անցկացման կարգը.
   5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, լոտի մեկնարկային գինը.
   6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
      ա) հայտ,
      բ) աճուրդի մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր,
      գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթեր (գրանցման վկայական, կանոնադրություն, ՀՎՀՀ),
      դ) տեղեկանք համայնքի ղեկավարի աշխատակազմից համայնքի բյուջեի նկատմամբ պարտքեր չունենալու վերաբերյալ.
   7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.
   8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.
   9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.
   10) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտի վաճառքի հերթականությունը.
   11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը: Աճուրդի կանոնակարգը տրամադրելու համար պահանջվում է միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:
7. Հրապարակային ծանուցման փոփոխություն կատարվում է սույն կանոնակարգով, ինչ կարգով կատարվել է հրապարակային ծանուցումը:
8. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթեր:
9. Աճուրդի մասնակցության հայտ չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը օրենքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:
10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք օր առաջ: Աճուրդն անցկացվում է փակ, որին մասնակցում են միայն գրանցված անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:

11. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:
12. Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:
13. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, աճուրդի մասին ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով, մուծում են նախավճար, որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսը: Նախավճարը մուծվում է աճուրդի կազմակերպչին: Նախավճարը կարող է վճարվել կանխիկ: Նախավճարը վճարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը մասնակցին է տրամադրում մասնակցի վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար սահմանվում է մուտքի վճար սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Աճուրդի մասնակիցներին մասնակցի վկայականներ տրամադրելը, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը դադարում է աճուրդի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ:
14. Աճուրդի կայացման ժամանակ պահպանվում է ծանուցման մեջ նշված լոտերի վաճառքի հերթականությունը:
15. Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:
16. Եթե լոտը չի վաճառվում, այդ թվում՝ ոչ մի գնորդ չներկայանալու դեպքում, ինչպես նաև եթե հաղթող ճանաչված անձը և (կամ) աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, ապա տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է չկայացած: Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:
17. Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով: Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչվելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության: Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով: Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման:
18. Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝
    1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը.
    2) լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լոտի վիճակը.
    3) լոտի մեկնարկային գինը.
    4) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և գտնվելու վայրը.
    5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
    6) լոտի գնման գինը.

    Արձանագրությունն ստորագրում են աճուրդն անցկացնելու օրը՝ հաղթող մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը:

    Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

    Ընդհանուր աճուրդի դեպքում արձանագրությունը կարող է կազմվել սակարկությունների ընթացքում: Լոտն աճուրդում վաճառելուց հետո տվյալ լոտի նկատմամբ հաղթող ճանաչված մասնակիցը հրավիրվում է արձանագրությունն ստորագրելու:
19. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված փաստաթղթերը: Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը, նվազագույն հավելման չափով՝ մեկնարկային գնի 5%: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացած մասնակիցը աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակիցը: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներակայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներակայացվել, ապա աճուրդավարը

վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին: Լոտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

20. Աճուրդն սկսելու պահից երեսուն րոպե առաջ կազմակերպիչը հնարավորություն է ընձեռնում մասնակիցներին ծանոթանալու աճուրդի կանոնակարգին՝ մասնակիցների համար հասանելի տեղում կանոնակարգը փակցնելու միջոցով:
21. Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկից ավելի է:
22. Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը: Յուրաքանչյուր սակարկության արդյունքով կազմվում է առանձին արձանագրություն, որն իր մեջ ներառում է տվյալներ՝ աճուրդի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, սակարկման ընթացքի և արդյունքների մասին:
23. Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
24. Եթե աճուրդը չի կայանում երկրորդ անգամ, ապա հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքով՝ սահմանված մեկնարկային գնով: Ուղղակի վաճառքի դեպքում գնման նախապատվություն ունեն տվյալ համայնքի բնակիչները:
25. Արձանագրությունն ստորագրում են կազմակերպիչը, արձանագրողը և, ցանկության դեպքում աճուրդի մասնակիցները: Արձանագրությունը պահպանվում է Վայքի համայնքապետարանի աշխատակազմում:
26. Աճուրդը համարվում է չկայացած, եթե ներկայացվել է մասնակցության մեկ հայտ, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:
27. Աճուրդում հաղթած և հողամասը գնելուց հրաժարված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում: Նա զրկվում է նաև տվյալ հողամասն ուղղակի վաճառքով գնելու իրավունքից:
28. Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
29. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:
30. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Գ. Մուշկամբարյան**

*Հավելված 2*
ՀՀ Վայոց ձոր մարզի
Վայք համայնքի ավագանու
2020թ. մայիսի 4-ի թիվ 32-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. **Հողամասերի մրցույթով օգտագործման տրամադրման համար** մրցույթի կազմակերպիչը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում է մրցույթի հաղթողին:
2. Մրցութային հանձնաժողովը սահմանում է մրցույթի պայմաններ, որոնք պետք է ներառեն՝
   1) հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը.
   2) հողամասի չափը և վարձակալության ժամկետները.
   3) հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վարձավճարի մեկնարկային գինը.
   4) հողամասի օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը.
   5) հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը.
   6) գյուղատնտեսական հողատեսքերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները.
   7) բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:
3. Մրցույթներն անցկացվում են բաց, մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցույթները կազմակերպում և անցկացնում է մրցութային հանձնաժողովը:
4. Մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակում մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմանների ու պահանջների, մրցույթի անցկացման կարգի, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին:
5. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր: Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար դրա անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի գնի 5 տոկոսը: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:
6. Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:
7. Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:
8. Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին:
9. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը: Նա զրկվում է նաև մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու իրավունքից: Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթում հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:
10. Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը:
11. Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:
12. Մրցույթը չկայացած է համարվում, եթե մրցույթին ներկայացվել է միայն մեկ հայտ: Այդ դեպքում մրցույթը պետք է հայտարարվի չկայացած ոչ ուշ, քան դրա անցկացման հաջորդ օրը: Մրցույթի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
13. Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

14. Մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է հողի վարձակալության պայմանագիր:
15. Մրցույթի կազմակերպիչը մրցույթի անցկացման մասին կատարում է հրապարակային ծանուցում՝ մրցույթն սկսելուց առնվազն 30 օր առաջ: Մրցույթի մասին հրապարակային ծանուցում պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.
    1) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը).
    2) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
    3) մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերն ըստ օրերի,
    4) մրցույթի ձևը և անցկացման կարգը,
    5) մրցույթի լոտի նկարագրությունը (անվանումը), մրցութային պայմանները,
    6) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
       ա) հայտ,
       բ) մրցույթի մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր,
       գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթեր (գրանցման վկայական, կանոնադրություն, ՀՎՀՀ),
       դ) տեղեկանք համայնքի ղեկավարի աշխատակազմից համայնքի բյուջեի նկատմամբ պարքեր չունենալու վերաբերյալ.
    7) մրցույթում հաղթողին որոշելու կարգը.
    8) մրցույթին մասնակցելու նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները.
    9) մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.
    10) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը: Մրցույթի կանոնակարգը տրամադրելու համար կազմակերպիչը պահանջում է միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը: Մրցույթի հայտերը բացելու նիստի օրը նշանակվում է մրցույթի հայտերն ընդունելու վերջին օրվանից առնվազն 3 օր առաջ:
16. Մրցույթի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչը պարտավոր է անհապաղ կատարել մրցույթի մասին հրապարակային ծանուցման համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:
    Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը կատարվում է մինչև մրցույթի հաղթողին որոշելու օրը՝ երեսուն օրվա ընթացքում, ապա կազմակերպիչը կրում է մասնակիցների կողմից կրած իրական վնասների ռիսկը, եթե օրենքով կամ մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ այլ բան նախատեսված չէ:
    Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:
17. Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան կազմակերպչին են ներկայացնում մրցույթի հայտերը:
    1. Մրցույթի հայտերը ներկայացնում են սոսնձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Մրցույթի կանոնակարգով նախատեսվում է ծրարի վրա հետևյալ գրառումները.
       1) մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
       2) մրցույթի ծածկագիրը.
       3) «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը:
    2. Մրցույթի հայտը գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամսաթիվը և ժամը: Կազմակերպիչը մասնակցին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:
    3. Օրենքի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված մրցույթի հայտերն առանց բացելու մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին:
    4. Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է օրենքով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:
    5. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը կազմակերպչին ուղարկել պատվիրված նամակով: Մասնակիցները կարող են նույն կարգով հետ վերցնել մրցույթի հայտը:

6. Մասնակիցները հրապարակային ծանուցմամբ նախատեսված կարգով, չափով և ժամկետներում մուծում են նախավճար:

18. Մրցույթի հայտերը բացվում են մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում: Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝
    1) մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առարկում, ապա նաև՝ նրա անունը (անվանումը).
    2) մրցույթի հայտեր ներակայացնելու համապատասխանությունը մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.
    3) ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
19. Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերի և ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին:
20. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում է՝
    1) մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
    2) մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը.
    3) տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին.
    4) մրցույթում հաղթողի անունը (անվանումը).
    5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:
21. Մրցութային հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը: Մրցույթի արդյունքներն ամփոփելու և մրցույթում հաղթողին ճանաչելու օրը կազմակերպիչը և մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:
22. Մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահից մրցույթի կազմակերպիչը հնարավորություն է ընձեռնում, որ ցանկացողները ծանոթանան մրցույթի կանոնակարգին, ինչպես նաև տրամադրում է կանոնակարգի պատճեն՝ օրենքով նախատեսված կարգով:
23. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
24. Սակարկությունների կազմակերպիչը վարում է փաստաթղթային գրառումներ և պահպանում է աճուրդների և մրցույթների հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն):

**Աշխատակազմի քարտուղար՝** **Գ. Մուշկամբարյան**